Ա-ի զօրքի պարտութեան պատճառներից մէկն այն էր, որ հակառակորդը արդէն բանակ էր դրել, երբ Սմբատ Ա-ի զօրքը, թագաժառանգներ Աշոտի եւ Մուշեղի գլխաւորութեամբ հասաւ ճակատամարտի վայր: Աշոտը եւ Մուշեղը չեն հասցնում զօրքին հանգիստ տալ, մարտակարգ կազմել: Մինչդեռ արաբները արագօրէն պատրաստւում են եւ անցնում յարձակման, ինչը եւ նրանց առաւելութիւն է տալիս: Մղուելիս գիւղի ճակատամարտում եւս զինուորների եւ ձիերի յոգնածութիւնը երկար ճանապարհից, որը նրանք անցել էին ողջ գիշերուայ ընթացքում, թոյլ չի տալիս պատշաճ դիմադրութիւն ցոյց տալ հակառակորդին:

Հայոց բանակում կիրառուել են նաեւ մարտավարական այլ հնարքներ, որոնց նպատակը զինուորների բարոյահոգեբանական վիճակը բարձր մակարդակի վրայ պահելն էր: Զօրքի մարտական ոգին բարձրացնում էին մարտակոչերով եւ դոռում-գոչիւններով յարձակուելով, ճակատամարտերից առաջ թմբուկներ զարկելով, փողեր հնչեցնելով, զէնքերն իրար հարուածելով: Մուսա իբն Զուրարայի եւ Բագարատ Բագրատունու միջեւ ճակատամարտից առաջ վահանաւորները եւ նիզակաւորները գոչում էին. «վահանաւորքն եւ նիզակաւորքն գոչէին»[60]: Արճուճքի ճակատամարտի մասին խօսելիս պատմիչը շեշտում է Աշոտ Արծրունու զօրքի յարձակուելը արաբների վրայ «արիական ձայնարկութեամբ»[61]: Աշոտ Բ-ն յաճախ էր կիրառում այս հնարները եւ բազմիցս յաղթանակներ էր տանում[62]:

Այսպիսով, Բագրատունեաց շրջանի բանակի մարտավարութիւնը բաւականաչափ բազմազան էր, մարտավարական եղանակները եւ առանձնայատկութիւնները պայմանաւորուած էին կոնկրետ իրադրութեամբ եւ նպատակ ունէին ապահովել հայոց զօրքի վերջնական յաղթանակը:

60 Թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 174:

61 Նոյն տեղում, էջ 178:

62 Յովհաննէս Դրասխանակերտցի, էջ 313:

ՀԱՅ-ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ԽԶՈՒՄԸ (ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ)

Արամ Յովհաննիսեան

Հայ-մոնղոլական յարաբերութիւնների ուսումնասիրութիւնը Կիլիկիայի հայկական թագաւորութեան պատմութեան կարեւոր խնդիրներից մէկն է: Յայտնի է, որ հայկական թագաւորութեան քաղաքական եւ տնտեսական կեանքում մեծ դերակատարում ունէին մոնղոլները, որոնք դեռեւս ԺԳ. դարի կէսերից զինական համագործակցութեան մէջ մտան հայերի հետ: Հայկական թագաւորութիւնը, դաշնակցելով մոնղոլների հետ, ներգրաւուեց Եգիպտոսի սուլթանութեան դէմ պայքարում, որն ի վերջոյ ունեցաւ ողբերգական հետեւանքներ Կիլիկեան պետութեան համար: Մինչեւ օրս էլ արդի պատմագիտութեան մէջ բաւարար կերպով ուսումնասիրուած չեն հայ-մոնղոլական յարաբերութիւնները, իսկ դաշինքի խզման մասին ընդհանրապէս ուսումնասիրութիւն գոյութիւն չունի: Ներկայ հետազօտութեան նպատակն է լրացնել այդ բացը:

ԺԴ. դարի սկզբներին նոր տեղաշարժեր կատարուեցին Մերձաւոր արեւելքի քաղաքական կեանքում, որոնք չափազանց աննպաստ էին նաեւ Կիլիկիայի հայկական թագաւորութեան համար: Խնդիրն այն է, որ եւրոպական պետութիւնների միջեւ լարուած յարաբերութիւնների հետեւանքով գրեթէ վերացան խաչակրաց նոր արշաւանք կազմակերպելու յոյսերը: Իրական օգնութիւն ցոյց տալու փոխարէն՝ եւրոպական երկրների միապետերը եւ Հռոմի պապը ձգտում էին աւելի ընդարձակել Կիլիկիայում իրենց ազդեցութեան ոլորտները եւ, նամակներ առաքելով ու ֆինանսական օժանդակութիւն ցոյց տալով, լուծել իրենց յուզող քաղաքական ու տնտեսական խնդիրները: Բացի այդ՝ այս շրջանում աւելի խորացաւ Կիլիկիայի գլխաւոր դաշնակից Մոնղոլական իլխանութեան համընդհանուր ճգնաժամը: Նման պայմաններում մամլուքեան վտանգն աւելի ուժեղացաւ:

Կիլիկեան Հայաստանի եւ մոնղոլների դաշինքի խզումը կապուած է Փիլարդուի ենդ դաւադրութեան հետ: 1307 թ. նոյեմբերի 17-ին (18) Կիլիկիայում մոնղոլական զօրքերի հրամանատար Փիլարդուն, որը մահմեդականութիւն էր ընդունել, քաջալերուելով երկրում տիրող դրութիւնից, ձեռնարկեց դաւադրութիւն. հիւրասիրութեան պատրուակով իր մօտ՝ Անարզաբա քաղաք հրաւիրեց Լեւոն Դ. արքային, Հեթում թագաւորահօրը եւ 40 ականաւոր իշխանների, այդ թւում՝ Օշին սպարապետին, Հեթումի եղբօրորդի պարոն Թորոսին եւ կազմակերպեց նրանց սպանութիւնը[1]. «Ի

1 Սամուէլ Անեցի, *Հաւաքմունք ի գրոց պատմագրաց*, Վաղարշապատ, 1893, էջ 156. Սմբատ Սպարապետ, *Պատմութիւն*, Մոսկուա, 1856, էջ 119. *Մանր ժամանակագրութիւններ*, կազմեց Վ. Յակոբեանը, հտ. Բ, Երեւան, 1956, էջ 88-89. Աբուլ-Ֆիդա, Յակուտ ալ Համաւի,- *Արաբական աղբիւրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին*, կազմեց՝ Հ. Նալբանդեանը, Երեւան, 1965, էջ 245-246. *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, կազմեց Լ. Խաչիկեանը, Երեւան, 1950, էջ 55: Այդ մասին տես նաեւ՝ Ս. Բոռնազեան, *Կիլիկիայի հայկական թագաւորութեան ներքին եւ միջազգային դրութիւնը XIII դարի վերջերին եւ XIV դարի սկզբին*. Գ. Միքայէլեան, *Կիլիկիայի հայկական պետութեան պատմութիւն*, Երեւան, 2007, էջ 442. *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. Գ, Երեւան, 1976, էջ 767. Կ. Մութաֆեան, *Կիլիկիան կայսրութիւնների խաչմերուկում*, Երեւան, 2001, էջ 460. Ա. Սուքիասեան, *Կիլիկիայի հայկական*

թուականիս Հայոց ՉԾԶ 1307, ի նոյեմբերի ի ԺԷ. 17 աւրն սպանաւ աւագ պարոն Հայոց Հեթում եւ գեղուղէշ եւ ամենաբարի պատանին, եղբայր որդին իւր՝ Լեւոն, որդի պարոն Թորոսի, ի ստորոտս Անարզաբու, յանաւրէն Պելարդոյէ, եւ սուգ մեծ թողին ազգիս Հայոց»[2]: Պատմագիտութեան տեսանկիւնից շատ հետաքրքիր է պարզաբանել, թէ որն էր մոնղոլ զօրավարի այդ ոճրագործութեան գլխաւոր պատճառը, եւ ինչպիսի հետեւանքներ այն ունեցաւ երկու պետութիւնների համար: Յայտնի փաստ է, որ Ղազան իլխանի եւ Կիլիկեան Հայաստանի ղեկավարութեան միջեւ միշտ էլ եղել են շատ ջերմ յարաբերութիւններ: Դա է վկայում նաեւ Հեթում պատմիչը, որը մեծ գովասանքի խօսքեր է ուղղում մոնղոլ իլխանի հասցէին: Ղազան իլխանի մահից յետոյ նոր իլխան դարձաւ իր եղբայրը՝ Օլջէյթուն: Ճիշտ է, նոր միապետը սկզբնական շրջանում շարունակեց Կիլիկեան Հայաստանի հետ դաշնակցութիւնը, սակայն միաժամանակ սկսեց մերձենալ իսլամական ընտանիքների հետ եւ հասաւ նրան, որ ստիպեց քրիստոնեաներին կրել տարբերակիչ նշաններ[3]: Հեթում պատմիչը վկայում է, որ նա սկզբնական շրջանում քրիստոնեաների նկատմամբ հանդուրժողականութիւն ցուցաբերեց[4], սակայն որոշ ժամանակ անց փոխեց իր վերաբերմունքը եւ հալածանքներ սկսեց նրանց դէմ[5]:

Վերադառնալով 1307 թ. Փիլարզուի դաւադրութեանը՝ պէտք է նշել, որ նրան ժամանակին հէնց Ղազան իլխանն էր ուղարկել Կիլիկիայի հայկական թագաւորութիւն մի բանակով՝ հաւանաբար իր դաշնակիցներին մամլուքների յարձակումներից պաշտպանելու համար: Նախ տեսնենք, թէ ինչ են մեզ հաղորդում այդ մասին միջնադարեան աղբիւրները: Հայկական աղբիւրներից Սամուէլ Անեցու երկը շարունակողներից մէկը Փիլարզուի արարքը պատճառաբանում է մոնղոլ զօրապետի կողմից Կիլիկիան գրաւելու ցանկութեամբ. «Եւ կամէր զԿիլիկիա յինքն յափշտակել»[6]: Թէեւ Սամուէլ Անեցու աշխատութիւնը բաւականին լուրջ աշխատանք է, սակայն նրա այդ միտքը ընդունելի չէ, քանի որ դժուար թէ մոնղոլ հրամանատարը ունենար իլխանութեան վերնախաւի համաձայնութիւնը: Զմոռանանք նաեւ, որ մոնղոլները ապագայում ծրագրում էին նոր արշաւանք կատարել դէպի Սիրիա, ուստի տրամաբանութիւնից զուրկ է վերը նշուած տեսակէտը: Ինչ վերաբերում է Սմբատ Սպարապետի պատմութեան շարունակողին, ապա, պէտք է նշել, որ նա էլ է հակիրճ ներկայացնում տեղի ունեցածը՝ հետազօտողներին դնելով ծանր կացութեան մէջ. «Սպան Պիլարդուն զտղայ թագաւորն Լեւոն, եւ զհօր եղբայրն պարոն Հեթում՝ յԱնավարզոյ առջեւն»: Ինչպէս նկատում ենք, թէ՛ Սամուէլ Անեցին եւ թէ՛ Սմբատ Սպարապետի պատմութեան շարունակողը յստակ չեն նշում, թէ ինչու մոնղոլ հրամանատարը նման քայլի գնաց: Այս դէպքերի մասին մեզ տեղեկութիւններ է հաղորդում նաեւ մանր ժամանակագիրներից մէկը, սակայն վերջինս գրեթէ

պետութեան եւ իրաւունքի պատմութիւն, Երեւան, 1978, էջ 87. **Մ. Օրմանեան**, *Ազգապատում*, Էջմիածին, 2001, հտ. Բ, սիւն 2081-2082, **Ա. Յովհաննիսեան**, *Կիլիկիայի հայկական թագաւորութեան եւ Եգիպտոսի սուլթանութեան յարաբերութիւնները 1250-1375 թթ.*, Երեւան, 2008, էջ 141:

2 **Լ. Խաչիկեան**, *Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ ԺԴ դարի*, էջ 55:

3 *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի հիշատակարաններ*, էջ 53, 76, **Հեթում պատմիչ**, էջ 67: Այդ մասին տե՛ս նաեւ՝ **Յ. Մանանդեան**, *Երկեր*, հտ. Գ, Երեւան, 1977, էջ 327. **T. Boase**, *The Cilician Kingdom of Armenia*, Edinburgh, 1978, p. 29:

4 **Հեթում պատմիչ**, էջ 67:

5 **Հեթում պատմիչ**, էջ 67, *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, էջ 46, 47, 48:

6 **Սամուէլ Անեցի**, էջ 155-156:

կրկնում է Սմբատ Սպարապետի պատմութեան շարունակողին եւ բաւարարւում է՝ միայն նշելով հայոց արքայի եւ իշխանների սպանութեան փաստը. «Ընդ այսմ իսկ ժամանակիս ՌՅէ (1307) եւ Հայոց թուին (ՉԾԶ) 1307 Նուէմբեր ԺԷ. 17 սպանաւ վերոյ ասացեալ պարոնս Հայոց Հեթում եւ դեռաբոյս թագաւորն Հայոց Լեւոն, եղբօրորդի Թորոսին...»[7]: Վերոնշեալ դէպքերի կապակցութեամբ որոշ նիւթ է տրամադրում նաեւ ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններից մէկը. «Ի ժամանակի յորում էր թուականս մեր ՉԾԶ. 1307, ի պակասել արդարութեանց եւ ի բազմանալ անօրէնութեանց մերոց, առաւել բազմացաւ բարկութիւն եւ սաստկացաւ չարութիւն ազգին նետողաց ի վերայ մեր՝ ազգիս քրիստոնէից, քանզի էլ աղայ հասակաւ այր մին ի Խորասանայ միականի, համանման նեռինն, որ գալոցն է, անուն նորայ Խարբանդա, որ թարգմանի իշու ծառայ... Սա բառնալ կամեցաւ զքրիստոնէութիւն աշխարհէս Հայոց եւ Վրաց, զոր խափանեաց Տէր եւ ոչ կատարեցաւ չար խորհուրդ նորայ...»[8]: Փաստօրէն, հայկական աղբիւրների տրամադրած տեղեկութիւնները բաւականին աղքատիկ են վերոնշեալ դէպքը խորութեամբ ուսումնասիրելու համար: Խնդրի լուծման համար շահեկան կարող են լինել արեւելեան, մասնաւորապէս՝ արաբական աղբիւրների հաղորդումները: Նախ այդ մասին խօսում է նշանաւոր պատմիչ Աբուլ-Ֆիդան, որը հաստատում է մոնղոլ զօրավարի կատարած ոճրագործութիւնը, սակայն որեւէ նոր տեղեկութիւն, որը կարող էր օգտակար լինել մեզ համար, չի հրապարակում[9]: Աւելի ուշագրաւ փաստեր է մեզ յայտնում Եգիպտոսի սուլթանի արքունի պատմիչը՝ Մաքրիզին. «Փիլարդուն մահմեդական էր դարձել եւ ջերմեռանդ էր կրօնի հարցերում: Նա եկաւ Սիս եւ որոշեց այնտեղ մզկիթ կառուցել... Այս ծրագիրը դուր չեկաւ Հեթումին. նա գրեց Խուդաբանդային, որ Փիլարդուն մտադրուել է եգիպտացիների կողմն անցնել եւ Սսում մզկիթ կառուցել... Եւ որոշ ժամանակ անց Փիլարդուն մի խիստ նամակ է ստանում մոնղոլական իլխանութեան վերնախաւից եւ դրա համար էլ վրէժխնդիր է լինում հայոց արքայից»[10]: Դժուար է համաձայնել Մաքրիզիի այս հաղորդման հետ եւս: Բանն այն է, որ այդ ժամանակ մոնղոլներն արդէն մահմեդական էին, ուստի մոնղոլական արքունիքը քիչ հաւանական է, որ լուրջ վերաբերուէր դրան: Բացի այդ, եթէ նոյնիսկ Փիլարդուն իրականում մզկիթ կառուցէր Սսում, դա դեռ չէր նշանակում, որ վերջինս ցանկանում էր անցնել եգիպտացիների կողմը: Եթէ իրականում նմանատիպ մզկիթ կառուցուէր, ապա հաղիւ թէ այն վրիպէր հայ մատենագիրների աչքից: Միջնադարեան ժամանակաշրջանի եւ ոչ մի հեղինակի մօտ մինչեւ օրս էլ չենք հանդիպել մի փաստի, որը խօսի Սսում մոնղոլ զօրապետի կողմից մզկիթի կառուցման մասին: Ամէն դէպքում, մեր խորին համոզմամբ, նման լուրջ գործողութիւն կատարելու համար անհրաժեշտ էր աւելի հիմնարար պատճառ ունենալ: Կարծում ենք՝ Եգիպտոսի սուլթանի արքունի պատմիչը պարզապէս փորձում է թաքցնել մոնղոլ զօրավարի արարքի բուն պատճառը: Իսկ դա նշանակում է, որ Եգիպտոսի սուլթանութեանը այդքան էլ ձեռնտու չէր բացայայտումը: Այս հարցում մեզ կրկին օգնում են արաբական աղբիւրները, որոնք անգնահատելի «գանձ» են միջնադարեան Հայաստանի եւ ընդհանրապէս Մերձաւոր

---

7 *Մանր ժամանակագրութիւններ*, հտ. Բ, էջ 188:

8 *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, էջ 46:

9 *Արաբական աղբիւրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին*, էջ 245-246:

10 **Makrizi**, *Histoire des Sultans mamelouks, 1250-1308*, trade. E. Quatremere, vol. 2, part 11, p. 620.

արեւելքի երկրների պատմութեան հետազօտման համար:

Այսպէս, 1307 թ. դէպքերի մասին խօսում է նաեւ Աբուլ-Կասիմ Աբդալլայ իբն Ալի ալ Քաշանին, ըստ որի Փիլարդուն ստացել էր սուլթան Մուհամմէդ Խուդաբենդեհ Օլջայթուից մի զօրաբաժնի հրամանատարութիւնը՝ Իրենչի Նուինի բանակում: Երբ այս վերջինը հիջրի 606 թուականին 1306 Ռումի երկրի զինուորական կառավարիչ նշանակուեց, Փիլարդուն իր զօրամասով եկաւ հաստատուելու Կիլիկիայում: Իր զինուորները մահմեդական էին, ինքը եւս լի էր նորադարձի եռանդով: Հայերը ախոռի էին վերածել Մամուն խալիֆի աղջկայ՝ Այիշէի գերեզմանը Սսի մօտ: Սրբապղծուած այդ շիրիմը տեսնելով՝ Փիլարդուն եւ իր զինուորները զայրացան եւ ամէն տեսակ ծայրայեղութիւնների դիմեցին: Լեւոնը գանգատուեց Օլջայթուին եւ տեղեկացրեց Եգիպտոսի սուլթանին՝ Ալ-Մալիք ալ Նասր Կալաւունին, թէ անկարող է վճարել տարեկան հարկը: Ալ-Մալիք ալ Նասրը ուղարկեց Փիլարդուին, որպէսզի նա այդ առթիւ բացատրութիւն պահանջի հայոց թագաւորից: Փիլարդուն էլ հրաւիրեց Լեւոնին, որ գայ հանդիպի իրեն՝ իր վրանում: Թագաւորը գնաց Հեթում Բ.-ի եւ երեք պարոնների ընկերակցութեամբ: Երբ նա Փիլարդուի առաջ կանգնեց, մոնղոլ հրամանատարը տեղից բարձրացաւ եւ նրա գլուխը կտրեց սրի հարուածով: Լսելով իրենց զօրավարի ձայնը՝ զինուորները յարձակուեցին Լեւոնի ուղեկիցների վրայ եւ սպանեցին նրանց[11]: Ինչպէս նկատում ենք, թէ՛ հայկական եւ թէ՛ օտար սկզբնաղբիւրների մէջ ամենաընդարձակը Աբուլ-Կասիմ իբն Ալի ալ Քաշանիի տեղեկութիւններն են: Ճիշտ է, այստեղ կան որոշ բացթողումներ, բայց ընդհանուր առմամբ արաբ հեղինակի հաղորդումները անգնահատելի են: Իսկ թերի է հաղորդման այն հատուածը, երբ պատմիչը խօսում է այն մասին, թէ իբր սպանուել է արքան 3 պարոնների հետ միասին, այնինչ յայտնի է, որ սպանուած իշխանների եւ ականաւոր մարդկանց թիւը շատ աւելի էր: Կարեւորն այս հաղորդումներից այն է, որ հեղինակը փորձում է տալ կատարուած դէպքի պատճառը, այսինքն՝ ինչու կատարուեց ոճրագործութիւնը: Ամէն դէպքում, կարծում ենք, որ դժուար թէ Այիշէի գերեզմանը ախոռի վերածելը միակ պատճառն էր, որի արդիւնքում մոնղոլ զօրավարը նման քայլի գնաց: Այստեղ, ինչպէս Մաքրիզիի մօտ, փորձ է արւում թաքցնել դէպքերի իրական պատճառը: Խնդիրն այն է, որ Լեւոն արքան մինչ այս դէպքը կանոնաւոր կերպով հարկ էր վճարում Եգիպտոսի սուլթանին, եւ չկար մի պատճառ, որի համար նա հրաժարուէր հարկատուութիւնից: Իսկ եթէ անգամ հրաժարուէր, ապա նման պարագայում այդ փաստը պէտք է յարուցէր ոչ թէ Փիլարդուի, այլ Եգիպտոսի սուլթանութեան զայրոյթը: Շատ հետաքրքիր է նաեւ ժամանակի նշանաւոր հեղինակ Ռաշիդ ադ-Դինի երկը շարունակողներից մէկի հաղորդումը: Ակնյայտ է, որ նա քաջատեղեակ է Լեւոն արքայի, նրա հօրեղբայր Հեթումի եւ շատ հայ իշխանների սպանութեան հանգամանքներին: Ըստ նրա՝ Փիլարդուն սկսել է ճնշել հայոց արքային՝ դրամ պահանջելով[12]: Այդ է վկայում նաեւ ԺԴ. դարի յիշատակարաններից մէի հեղինակը. «Առաքեաց ընդ ամենայն երկրի իշխանութեան իւրոյ դնել, նշան խայտառակութեան քրիստոնէից եւ հարկ առնուլ ըստ մարդաթուի խ. 40 արծաթոյ մինչեւ ԺԸ. 10 ըստ կարի»[13]: Լեւոն Դ-ն մի քանի անգամ բողոքել էր մոնղոլ իլխան Օլջէյ-

11 *Արաբական աղբիւրները*, էջ 283, ծանօթագրութիւն 105:

12 Գ. Միքայէլեան, նշ. աշխ., էջ 442:

13 *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, էջ 46:

թուին՝ ապարդիւն կերպով ձգտելով հեռացնել տալ Փիլարդուին զբաղեցրած պաշտօնից: Վերջինս, իմանալով այդ մասին, որոշել է վրէժ լուծել: Շուտով ներկայանում է նաեւ առիթը: Մելիք-Նասր Մուհամմէդը Փիլարդուի մօտ դեսպան է ուղարկում, որպէսզի բանակցութիւններ վարի Կիլիկեան Հայաստանի կողմից մոնղոլներին եւ Եգիպտոսին հարկ վճարելու վերաբերեալ: Ամենայն հաւանականութեամբ, դեսպանը Փիլարդուին հաղորդել է Եգիպտոսի սուլթանի հետ Լեւոն արքայի գաղտնի բանակցութիւնների մասին: Փիլարդուն էլ իր հերթին հայոց արքային կանչել է իր մօտ եւ կատարել ոճրագործութիւնը: Կարծում ենք, որ այս հաղորդումն ամէնից իրատեսականն է եւ, իրօք, շատ հաւանական է, որ մոնղոլ զօրավարը այդ ոճրագործութիւնը կատարել է՝ ելնելով սեփական շահերից: Չի բացառւում նաեւ այն հանգամանքը, որ միգուցէ Փիլարդուի եւ մամլուքների միջեւ եղել է որոշակի գաղտնի կապ:

Այժմ տեսնենք, թէ ինչպիսի տեսակէտներ են արտայայտում հետազօտողները: Այսպէս, պատմաբան Միքայէլ Զամչեանը նշում է, որ հայ իշխաններից ոմանք, որոնք դէմ էին Սսի 1307 թ. ժողովի որոշմանը, Կիլիկեան Հայաստանում տեղաւորուած մոնղոլական զօրքերի հրամանատարին դրդել են սպանել Լեւոն արքային եւ նրա հօրեղբայր Հեթումին[14]: Դժուար է համաձայնել այս տեսակէտի հետ, քանի որ Սսի 1307 թ. ժողովում ընդունուած որոշումները ոչ մի ձեւով չէին հակասում մոնղոլական իլխանութեան շահերին: Դեռ աւելին, այդ որոշման ընդունմամբ հայերը նպատակ ունէին կատարել քրիստոնեայ արեւմուտքի պահանջը՝ օգնութիւն ստանալ եւ միասնական ճակատ ստեղծել ընդդէմ Եգիպտոսի սուլթանութեան: Պարզապէս չի կարելի բացառել այն հանգամանքը, որ միգուցէ Փիլարդուն գաղտնի համագործակցել է Եգիպտոսի սուլթանութեան հետ եւ վերջինիս դրդմամբ էլ կատարել այդ ոճրագործութիւնը: Այլապէս, եթէ Մ. Զամչեանի տեսակէտը ընդունենք, ապա ոճրագործութիւնից յետոյ այդ իշխանները եւ ժողովրդի մեծ մասը պէտք է ընդունէին Փիլարդուին եւ նրա կատարած քայլը, բայց, ինչպէս գիտենք, վերջինս արտաքսուեց երկրից:

Այս խնդրին անդրադարձել է նաեւ Ալեքսէյ Սուքիասեանը, ըստ որի 1307 թ. Փիլարդուի կատարած նենգ դաւադրութիւնը թելադրուած էր թուրք-սելջուկների կողմից[15]: Ցաւօք, գիտնականը բաւարարւում է միայն այսքանով եւ ոչ մի աղբիւրի հաղորդմամբ չի հիմնաւորում իր տեսակէտը:

Այս խնդրի մասին խօսում է նաեւ Սարգիս Բոռնազեանը՝ նշելով, որ հայ եւ օտար աղբիւրների տուեալներից կարելի է եզրակացնել, որ Փիլարդուն ցանկացել է իր հսկողութեան տակ վերցնել Կիլիկիայի հայկական թագաւորութեան արտաքին քաղաքականութիւնը եւ ստիպել վերջինիս հրաժարուել Եգիպտոսին հարկ վճարելուց: Այնուհետեւ հեղինակը յղում է կատարում Մ. Օրմանեանից, որին, բնականաբար, աղբիւր համարել չի կարելի[16]: Շարունակելով իր միտքը՝ հեղինակը աւելացնում է, որ մոնղոլ զօրավարը ցանկանում էր Կիլիկիայի կողմից աւելացնել մոնղոլներին տրուող հարկի քանակը[17]: Նախ, ինչպէս գիտենք, դեռեւս ԺԳ. դարի երկրորդ կէսից Կիլիկիայի հայկական թագաւորութեան արտաքին քաղաքականութիւնը որոշակիօրէն կախուած էր մոնղոլական իլխա-

14 Մ. Զամչեան, *Հայոց պատմութիւն*, հտ. Գ., Երեւան, 1984, էջ 311:

15 Ա. Սուքիասեան, նշ. աշխ., էջ 93 :

16 *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. Գ., էջ 766-767:

17 Նոյն տեղում:

նութիւնից: Եւ Կիլիկեան Հայաստանը մի շարք պատերազմներից չկարողացաւ խուսափել հէնց այն պատճառով, որ հայկական թագաւորութեան վերնախաւը արտաքին քաղաքական հարցերում անկախ չէր: Ինչ վերաբերում է մոնղոլներին տրուող հարկի քանակի աւելացմանը, ապա պէտք է նշել, որ այստեղ եւս կասկածելի բան կայ: Խնդիրն այն է, որ մոնղոլական իլխանութիւնը, որը վաղուց ի վեր դանւում էր հայկական թագաւորութեան հետ դաշնակցային յարաբերութիւնների մէջ, դժուար թէ նման քայլի գնար. ինչպէս նախկինում, այնպէս էլ հետագայում Կիլիկեան Հայաստանի դաշնակիցները պատրաստւում էին նոր արշաւանքներ ձեռնարկել դէպի Սիրիա եւ Եգիպտոս եւ դուրս գալ Միջերկրական ծովի ափ: Զրկուել Կիլիկիայի նման դաշնակցի ծառայութիւնից, որն ունէր չափազանց յաջող աշխարհագրական դիրք, բոլորովին ձեռնտու չէր: Եւ մանաւանդ, կորցնելով Կիլիկեան Հայաստանը, նրանք ընդհանրապէս հարցականի տակ կարող էին դնել Մոնղոլական իլխանութեան հետագայ արշաւանքների ծրագրերը: Յաջորդ տարիներին էլ կեանքը ցոյց տուեց, որ կորցնելով Կիլիկիայի հայկական թագաւորութեան հետ դաշնակցութիւնը, մոնղոլները կորցրեցին իրենց բոլոր հնարաւորութիւնները դէպի Սիրիա եւ Եգիպտոս արշաւանքներ կատարելու: Այլ հարց է, որ այդ արարքը բխել է մոնղոլ զօրավարի անձնական նախաձեռնութիւնից եւ հետապնդել ինչ-ինչ նպատակներ:

Այս իրադարձութեան մասին խօսում է նաեւ Թ. Բոէյզը, ըստ որի 1307 թ. սպանութեան հիմքում ընկած էր այն հանգամանքը, որ մոնղոլները փոխել էին իրենց մօտեցումները քրիստոնեաների հանդէպ[18], իսկ ահա Կ. Մութաֆեանը ենթադրում է, որ այդ միջադէպը կարելի է դիտել որպէս Կիլիկիայի անկախ տէրը դառնալ ձգտող Փիլարդուի մտադրութիւն[19]: Հետաքրքրութիւնից զուրկ չէ նաեւ Կիլիկեան Հայաստանի պատմութեան յայտնի մասնագէտ Գ. Միքայէլեանի կարծիքը: Վերջինս նշում է, որ Իրանի մոնղոլների կողմից խլամ ընդունելուց եւ Սիրիայում նրանց պարտութիւնից յետոյ Հուլաւեանների վերաբերմունքը Կիլիկիայի հայկական թագաւորութեան նկատմամբ աստիճանաբար թուլացաւ: Կիլիկիայի նկատմամբ Փիլարդուի թշնամական քաղաքականութիւնը մոնղոլական վերնախաւի հաւանութիւնը գտաւ, ուստի եւ սկզբում նա արդարացուեց[20]: Վերջում կը ցանկանայինք անդրադառնալ Լ. Տէր-Պետրոսեանի տեսակէտին, ով բաւականին խորութեամբ ուսումնասիրել է նշուած խնդիրը: Հեղինակը նշում է, որ ոճիրը ընդամէնը ծայրամասային մոնղոլ պաշտօնեայի ձեռնարկած ինքնագլուխ քայլ էր[21]:

Այսպիսով, ծանօթանալով հայ եւ օտար աղբիւրների հաղորդած տեղեկութիւններին եւ ժամանակակից գիտական գրականութեանը, գալիս ենք այն եզրակացութեան, որ Փիլարդուի դաւադրութիւնը չէր լինի, եթէ մոնղոլական արքունիքը ունենար նախկին հզօրութիւնը: Նման պարագայում իլխանութեան բարձրագոյն ղեկավարութեան համար Կիլիկիայի հայկական թագաւորութեան աշխարհագրական դիրքը շատ օգտակար էր: Այստեղ հարց է առաջանում, արդեո՞ք իլխանութեան ղեկավարութիւնը տուել է նման յանձնարարութիւն Փիլարդուին: Պէտք է նշել, որ շատ հաւանական է, որ նման յանձնարարական եղած չլինէր, սակայն մոնղոլ հրամանատարը, տեսնելով իլխանութեան վերջին շրջանի քրիստոնեաների հանդէպ քաղաքականութեան կտրուկ շրջադարձը, փորձեց ինքնագլուխ գործել: Չի բացառւում նաեւ երրորդ կողմի միջամտութիւնը: Խօսքը վերաբերում է Եգիպտոսի սուլթանութեանը, որը կարող էր դրդել մոնղոլ հրամանատարին նման դաւադրութեան՝ քաջ գիտակցելով, որ հայ-մոնղոլական դաշինքի խզումը շատ օգտակար կը լինէր իրենց համար:

Իսկ ի՞նչ հետեւանքներ ունեցաւ հայ-մոնղոլական դաշինքի խզումը երկու կողմերի համար: Առաջին հերթին պէտք է նշել, որ այդ դաշինքի խզումը բացասական ազդեցութիւն ունեցաւ երկու պետութիւնների համար, քանի որ թշնամական տէրութիւններին աւելի ձեռնտու էր առանձին-առանձին պայքարել նրանց դէմ: Իրօք, Կիլիկեան Հայաստանը մնաց մէնմենակ՝ շրջապատուած մահմեդական պետութիւններով: Ճիշտ է, այս ժամանակաշրջանում դեռեւս իր գոյութիւնը պահպանում էր նաեւ Կիպրոսի թագաւորութիւնը, որն առերես իրեն համարում էր հայկական թագաւորութեան բարեկամը, սակայն հետագայ տարիները ցոյց տուեցին, որ նրանց բարեկամութիւնը կեղծ էր, իսկ ուժերն էլ բաւարար չէին, որպէսզի կարողանային պայքարել այնպիսի հզօր պետութիւնների դէմ, ինչպիսիք էին այդ

պահին Եգիպտոսի սուլթանութիւնը եւ թուրք-կարամանները: Հաւանաբար, այդ պատճառով էլ հայկական թագաւորութիւնը, օգնութիւն ստանալու նպատակով յատկապէս ԺԴ. դարից սկսած ուժեղացրեց բանակցութիւնները Հռոմի պապի եւ արեւմտաեւրոպական երկրների միապետերի հետ: Արդիւնքում՝ էլ աւելի սրուեցին Կիլիկիայի հայկական թագաւորութեան յարաբերութիւնները Եգիպտոսի սուլթանութեան եւ նրանց դաշնակիցների հետ, որի հետեւանքով էլ կործանուեց հայկական թագաւորութիւնը: Իսկ ի՞նչ հետեւանքներ ունեցաւ 1307 թ. դաւադրութիւնը մոնղոլական իլխանութեան համար: Բնականաբար, ոչ մի դրական ազդեցութիւն, քանի որ մոնղոլական իլխանութիւնը, որն արդէն չունէր իր նախկին հզօրութիւնը, կորցրեց մի կարեւոր դաշնակից: Իսկ հայկական թագաւորութիւնը քիչ օգուտ չէր տալիս նրանց Եգիպտոսի մամլուքների դէմ պատերազմում: Դրա վառ վկայութիւնն է այն փաստը, որ 1312 թ. մոնղոլական իլխանութիւնը, առանց Կիլիկեան Հայաստանի մասնակցութեան, կազմակերպեց արշաւանք դէպի Սիրիա, որն աւարտուեց խայտառակ պարտութեամբ[22]: Դրանից յետոյ էլ Մոնղոլական իլխանութիւնը աստիճանաբար թուլացաւ եւ վերջնականապէս անկում ապրեց 1353 թ.:

18 T. Boase, նշ. աշխ., p. 29.

19 Կ. Մութաֆեան, նշ. աշխ., էջ 461:

20 Գ. Միքայէլեան, նշ. աշխ. էջ 461:

21 Լ. Տէր-Պետրոսեան, *Խաչակիրները եւ հայերը*, հտ. Բ, Երեւան, 2007, էջ 374:

22 Ա. Յովհաննիսեան, նշ. աշխ, էջ 209: